Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-479[2]-13.02.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 245-րդ հոդվածում լրացնել 3-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3. Դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է միայն հանձնաժողովային կարգով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում՝

1. «հիվանդանոցում» բառը փոխարինել «կազմակերպությունում» բառով.

2. «տեղավորելը» բառից հետո լրացնել «եւ բուժելը» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 459-րդ հոդվածի՝

1. վերնագրում եւ 2-րդ մասում «տեղավորելը» բառից հետո լրացնել «եւ բուժելը» բառերը,

2. վերնագրում «հիվանդանոցում» բառը, իսկ 1-ին եւ 2-րդ մասերում «հաստատությունում» բառը փոխարինել «կազմակերպությունում» բառով,

3. 1-ին կետում՝ «տեղավորվել» բառից հետո «եւ բուժվել» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո:

Երկրորդ ընթերցում

Կ-479²-13.02.2020-ԱՍ-011/1

Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 245-րդ հոդվածում լրացնել 3-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3. Դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է միայն հանձնաժողովային կարգով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում՝

1. «հիվանդանոցում» բառը փոխարինել «կազմակերպությունում» բառով.

2. «տեղավորելը» բառից հետո լրացնել «եւ բուժելը» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 459-րդ հոդվածի՝

1. վերնագրում եւ 2-րդ մասում «տեղավորելը» բառից հետո լրացնել «եւ բուժելը» բառերը,

2. վերնագրում «հիվանդանոցում» բառը, իսկ 1-ին եւ 2-րդ մասերում «հաստատությունում» բառը փոխարինել «կազմակերպությունում» բառով,

3. 1-ին կետում՝ «տեղավորվել» բառից հետո «եւ բուժվել» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:~~ հրապարակման պահից երեք ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» (Կ-479[1] -13.02.2020-ԱՍ-011/0),«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» (Կ-479[2] -13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479[3] -13.02.2020-ԱՍ-011/0), «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-479[4] -13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479[5] -13.02.2020-ԱՍ-011/0), «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479[6]-13.02.2020-ԱՍ-011/1) , «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-479[7]-13.02.2020-ԱՍ-011/1), «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (Կ-479[8]-13.02.2020-ԱՍ-011/1) նախագծերի փաթեթի 2-րդ ընթերցմամբ քննարկման համար ներկայացված առաջարկների

Առաջարկի հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի ամբողջ տեքստում «հոգեբուժական կազմակերպություն» բառերը փոխարինել «հոգեկան առողջության կազմակերպություն» բառերով: *Հիմնավորում.* Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում բոլոր հոգեբուժական հաստատությունները վերանվանվել են «հոգեկան առողջության կենտրոն» անվանմամբ, ուստի նպատակահարմար է նախագծի ողջ տեքստում կիրառել «հոգեկան առողջության կենտրոն» հասկացությունը:	Չի ընդունվել: ՀՀ օրենսդրությամբ մի շարք իրավական ակտերով կիրառվում է «հոգեբուժական կազմակերպություն» եզույթը: Ուստի միասնականությունը ապահովելու նպատակով նպատակահարմար է կիրառել «հոգեբուժական կազմակերպություն» եզրույթը:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Հանել նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետը: *Հիմնավորում.* «Ընտանեկան բժիշկ» հասկացությունը չի կարող սույն օրենքի կարգավորման առարկա հանդիսանալ:	Չի ընդունվել: Նախագծում տրվել է ինչպես բժիշ-հոգեբույժի, այնպես էլ ընտանեկան բժշկի հասկացությունը: Ընդ որում, ընտանեկան բժշկի հասկացությունը սույն նախագածում սահմանելը պարտադիր է այն տեսանկյունից, որ սույն նախագծի իմաստով ընտանեկան բժիշկը պետք է պարտադիր ունենա վերջին 5 տարիների ընթացքում հոգեկան առողջության վերաբերյալ թեմաներով վերապատրաստում, որի դեպքում միայն կարող է լիազոր մարմնի կողմից	Ընդունվել է:

			սահմանված ծավալով տրամադրել հոգեբուժական օգնություն և սպասարկում:	
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետում՝ ա) «առնվազն երկու բժիշկ-հոգեբույժներից» բառերը փոխարինել «առնվազն 3 հոգեբույժներից (որոնցից մեկը հրավիրվում է այլ բժշկական հաստատությունից)» բառերով: բ) հանել «իսկ ոչ հոժարակամ հոսպիտալացման դեպքում՝ յուրաքանչյուր դեպքի համար» բառերը: *Հիմնավորում.* Հանձնաժողովը պետք է կազմված լինի կենտ թվով անդամներից, քանի որ տարակարծության դեպքում որոշումը կայացվելու է մեկ ձայնի տարբերությամբ: Կոռուպցիոն ռիսկերի կանխման նպատակով հանձնաժողովի անդամներից մեկը պետք է հանդիսանա այլ բժշկական հաստատության ներկայացուցիչ:	Ընդունվել է: Առաջարկի հիման վրա Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետում կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետում՝ ա) հանել «տեղաշարժի» բառը: *Հիմնավորում.* Ֆիզիկական զսպման միջոցները կիրառվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեշարժական գրգռված վիճակի զսպման նպատակով ոչ թե՝ տեղաշարժը սահմանափակելու նպատակով: Տեղաշարժը այս դեպքում ինքնին սահմանափակվում է, ուստի այս ձևակերպումը տարընթերցման տեղիք է տալիս, թույլ տալով ենթադրել, որ ֆիզիկական զսպման միջոցները կարող են կիրառվել նաև միայն տեղաշարժը սահմանափակելու նպատակով, մինչդեռ այդ նպատակով օրենքով սահմանված կարգով կիրառվում են մեկուսացման միջոցներ: բ) «շարժումների» բառը փոխարինել «հոգեշարժական գրգռված վիճակի» բառերով: *Հիմնավորում.* Մասնագիտական գրականության մեջ հոգեկան	Ընդունվել է մասնակի: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետից հանվել են «տեղաշարժի կամ» բառերը, որը փոխարինվել է «պահել» եզրույթով: Ինչ վերաբերում է «շարժումների» բառը «հոգեշարժական գրգռված վիճակի» բառերով փոխարինելուն, ապա այն չի ընդունվել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն, ինչպես և «պահել» եզրույթը բխում է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշներից (https://rm.coe.int/16807001c3):	Ընդունվել է:

		առողջության խնդիրներ ունեցող անձի հոգեկան լարվածությունը ուղեկցող անկանոն շարժումները անվանում են «հոգեշարժական գրգռված վիճակ», ուստի նպատակահամար է օրենքի տեքստում «շարժումներ» բառի փոխարեն սույն իմաստով օգտագործել վերը նշված բառերը:		
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետից հանել «կամ շարժումների» բառերով: *Հիմնավորում.* Մեկուսացումը չի ենթադրում անպայման նաև ֆիզիկական զսպման միջոցի կիրառում, ուստի սահմանափակվում է միայն անձի տեղաշարժը և ոչ թե շարժումները:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետից «կամ շարժումների» բառերը հանվել են:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 5-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ նոր 21-րդ կետով. «21. կեցության արժանապատիվ պայմաններում բնակվելու իրավունքը»: *Հիմնավորում.* Մարդու հիմնարար իրավունքներից է ունենալ այնպիսի կենսամակարդակ, ներառյալ սնունդը, հագուստը, բնակվելու պայմանները, որն անհրաժեշտ է իր առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում լրացվել է 5-րդ կետ և 7-րդ մաս:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 6-րդ հոդվածի երկրորդ մասում «չափահաս» բառը փոխարինել «16 տարին լրացած» բառերով: *Հիմնավորում.* Համաձայն ՀՀ օրենսդրության՝ չափահաս անձ է համարվում 18 տարին լրացած անձը: Միևնույն ժամանակ, համաձայն <<Բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մարդկանց բուժման նպատակով սույն հոդվածով նախատեսված հետազոտությունները և փորձարկումները կարող են իրականացվել միայն նրանց իրազեկված գրավոր համաձայնության դեպքում, իսկ նույն օրրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի, 16 տարին լրացած երեխան բժշկական միջամտության	Ընդունվել է: Կտարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		համար իրազեկված համաձայնություն տալու իրավունք ունի:		
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման բժշկական ցուցումների ցանկը սահմանում է լիազոր մարմինը»: *Հիմնավորում.* Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման հիմքերը սահմանված են նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման բժշկական ցուցումների ցանկը պետք է սահմանի լիազոր մարմինը:	Չի ընդունվել: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառումով սահմանափակվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքները, ուստի որպես երաշխիք անհրաժեշտ ենք համարում բացի ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման հիմքերից և ընթացակարգային այլ հարցերից, օրենքի մակարդակով սահմանել նաև դրանց կիրառման բժշկական ցուցումները:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետեւյալ նախադասությամբ. «Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդներ կիրառման հակացուցումների ցանկը սահմանում է լիազոր մարմինը»: Ինչպես ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդներ կիրառման բժշկական ցուցումները, այնպես և հակացուցումները պետք է հստակ սահմանված լինեն լիազոր մարմնի կողմից:	Չի ընդունվել: Ի տարբերություն ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման բժշկական ցուցումների, հակացուցումների ցանկը սպառիչ հնարավոր չէ սահմանել, դրանք ի հայտ են գալիս յուրաքանչյուր անհատական դեպքով: Այդ է պատճառը, որ որպես երաշխիք սահմանվել են ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման առավելագույն տևողությունը, դրանց կիրառման ամբողջ ժամանակահատվածում պացիենտին մշտապես հսկողության տակ պահելու բուժանձնակազմի պարտականությունը, ինչպես նաև յուրաքանչյուր անհատական դեպքով դրանց կիրառման հակացուցումները հաշվի առնելու բժիշկ-հոգեբույժի պարտականությունը:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասը հանել: *Հիմնավորում.* Նշված հասկացությունը արդեն իսկ սահմանված է սույն նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետում:	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասը հանվել է, ինչով պայմանավորված 8-րդ հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է:

	(*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)			
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «8.Կառավարության սահմանած կարգին համապատասխան դեղերի անվճար տրամադրումը:»: *Հիմնավորում.* Հոգեբուժական օգնության և սպասարկում տրամադրման մի մաս է կազմում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հատուկ հոգեմետ դեղերով ապահովումը, ուստի այն ինչպես և հոգեբուժական օգնության տրամադրումը պետք է լինի անվճար:	Չի ընդունվել: Նշված հարցը յուրաքանչյուր տարի որոշվում է պետական բյուջեի վերաբաշխումներով:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 11-րդ հադվածի 6-րդ մասը շարադրել հետեյալ նոր խմբագրությամբ. «6.Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց անգհետաձգելի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը տրամադրվում է անվճար:»: *Հիմնավորում.* Այն դեպքերում, երբ օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք իրենց հոգեկան վիճակի պատճառով կարող են վտանգ ներկայացնել իրենց կամ այլ անձանց համար, պետության երաշխիքը պետք է լինի պետության միջոցների հաշվին անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ անհետաձգելի հոգեբուժական օգնություն տրամադրելը:	Ընդունվել է: կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 12-րդ հադվածի առաջին մասը լրացնել հետեյալ նոր 6-րդ կետով. «6. ապահովում է արժանապատիվ կեցության պայմաններ:» *Հիմնավորում.* Մարդու հիմնարար իրավունքներից է ունենալ այնպիսի կենսամակարդակ, ներառյալ սնունդը, հագուստը, բնակվելու պայմանները, որն անհրաժեշտ է իր առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար:	Ընդունվել է: Նշված առաջարկն ընդունվել է, սակայն սահմանվել է, որ հոգեկան առողջության կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցության պայմանները սահմանում է լիազոր մարմինը:	Ընդունվել է:

Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 19-րդ հոդվածի առաջին մասը տեղափոխել նույն օրենքի նախագծի 3-րդ հոդվածի առաջին մաս: *Հիմնավորում.* Ելնելով նրանից, որ սույն օրենքն ունի առանձին հոդված, որում սահմանված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, ավելի նպատահարմար է բոլոր հասկացությունների սահմանումները տեղափոխել այդ հոդված:	Ընդունվել է: 19-րդ հոդվածի առաջին մասը տեղափոխվել է նույն օրենքի նախագծի 3-րդ հոդվածի առաջին մաս:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 20-րդ հոդվածի առաջին մասը տեղափոխել նույն օրենքի նախագծի 3-րդ հոդվածի առաջին մաս: *Հիմնավորում.* Ելնելով նրանից, որ սույն օրենքն ունի առանձին հոդված, որում սահմանված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, ավելի նպատահարմար է բոլոր հասկացությունների սահմանումները տեղափոխել այդ հոդված:	Ընդունվել է: Նախագծի 20-րդ հոդվածի առաջին մասը տեղափոխվել է նախագծի 3-րդ հոդվածի առաջին մաս:	Ընդունվել է:
ԲՀԿ խմբակցություն Որոշում 38/20	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում ենք նախագծում բոլոր «ոչ հոժարակամ» բառերը փոխարինել «հարկադիր» բառով:	Չի ընդունվել: Նախագծով սահմանվում է «ոչ հոժարակամ» և «հարկադիր» բուժում հասկացությունները: Հարկադիր բուժումը նշանակվում է քրեական գործի շրջանակներում, իսկ ոչ հոժարակամ բուժումը նշանակվում է քաղաքացիական դատավարության կարգով, երբ անձը իր կամ շրջապատի համար վտանգ է ներկայացնում: Վերոգրյալից ելնելով, և հաշվի առնելով ընթացակարգային տարբերությունները, նպատակահարմար է նշված եզրույթները կիրառել տարբեր անվանումներով:	Ընդունվել է:
ԲՀԿ խմբակցություն Որոշում 38/20	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479[3] -13.02.2020-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք նախագծում բոլոր «ոչ հոժարակամ» բառերը փոխարինել «հարկադիր» բառով:	Չի ընդունվել: Նախագծով սահմանվում է «ոչ հոժարակամ» և «հարկադիր» բուժում հասկացությունները: Հարկադիր բուժումը նշանակվում է քրեական գործի շրջանակներում, իսկ ոչ հոժարակամ բուժումը նշանակվում է քաղաքացիական դատավարության կարգով, երբ անձը իր կամ շրջապատի համար վտանգ է ներկայացնում: Վերոգրյալից ելնելով, և հաշվի առնելով ընթացակարգային	Ընդունվել է:

			տարբերությունները, նպատակահարմար է նշված եզրույթները կիրառել տարբեր անվանումներով:	
ԲՀԿ խմբակցություն Որոշում 38/20	«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479[5] -13.02.2020-ԱՍ-011/0)	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 47[15] . Հարկադիր հասպիտալացման կարգը խախտելը 1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հարկադիր հոսպիտալացնելուց հետո հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից 72 ժամվա ընթացքում հոգեբուժական հանձնաժողով չհրավիրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով: 2. Հարկադիր հոսպիտալացման հիմնավորվածությունը մասնագիտական հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ հաստատվելու դեպքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու համար հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից 72 ժամվա ընթացքում դատարան չդիմելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վաթսունապատիկի չափով: 3. Հիվանդանոցային հարկադիր բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժի կողմից ամիսը առնվազն մեկ անգամ հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովին հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով: 4. Մինչեւ օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի լրանալը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ հարկադիր բուժման օրենքով սահմանված հիմքերը վերանալու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից հարկադիր հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու պահանջով դատարան չդիմելը՝	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով: 5. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար՝ սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:»: Նախագծերի փաթեթին ներկայացված առաջարկները նպատակ ունեն պահպանելու իրավական որոշակիության սկզբունքը, ինչը այս պարագայում հնարավոր է հարկադիր, այլ ոչ թե ոչ հոժարակամ բառերի օգտագործման միջոցով:Հարկ է նշել, որ թե քրեական, թե քրեակատարողական օրենսգրքերը օգտագործում են հարկադիր բուժում բառերը, իսկ դրանց օգտագործումը այդ օրենսգրքերում ոչ միայն արգելք չէ այլ իրավական ակտերում դրանց կիրառման համար, այլև ընդհակառակը, դրանով պահպանվում և հստակեցվում է օրենսդիրի նպատակը և կամքը: Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքին վերաբերելի առաջարկները ուղղված են որոշ դեպքերում տուգանքի չափը հստակեցմանը՝պայմանավորված միասնական մոտեցման ցուցաբերմամբ, մյուս կողմից առաջարկները ուղղված են տուգանքների խստացմանը՝զանցանքի վտանգավորության աստիճանի հիմքով:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկվում է նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել նաև բժշկական գաղտնիք համարվող տվյալները «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգով ստանալու իրավասություն սահմանել նաև Ոստիկանության համար՝ վարորդական իրավունք տրամադրելու (փոխանակելու), զենքի շրջանառությունը վերահսկելու, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման նպատակով:	Ընդունվել է: Համապատասխան լրացումը կատարվել է Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության	<<Հոգեբուժական օգնության մասին>>	Առաջարկվում է զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկությունները	Ընդունվել է: Նախագծի 18-րդ հոդվածում լրացվել է նշված բովանդակությամբ 5-րդ մաս:	Ընդունվել է:

կառավարություն	օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	սահմանել «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկվում է 8-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել, որ բժիշկ-հոգեբույժը հենց ֆիզիկական զսպման ենթարկված անձին է 30 րոպե պարբերականությամբ զննում:	Ընդունվել է: Նշված առաջարկը բանավոր կարգով հնչեցրել է «Լուսավոր Հայաստան» խմբակցության կողմից, որի հիման վրա կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում «ընդունվելուց» բառերը փոխարինել «ուժի մեջ մտնելուց» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» *(Կ-479[8]-13.02.2020-ԱՍ-011/1*)	Առաջարկվում է զինծառայողներին հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկել գնդի հրամանատարի կողմից՝ ըստ բժշկի գրավոր եզրակացության: Եզրակացությանը կցվում են զինծառայողի բժշկական և ծառայողական բնութագրերը, որոնց ձևը սահմանում է պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը: Զորամասի բուժկետը վարում է հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկված զինծառայողների գրանցման գիրք:Հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկված բոլոր զինծառայողները ենթարկվում են ռազմաբժշկական փորձաքննության:	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է 2-րդ հոդվածով:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» *(Կ-479[8]-13.02.2020-*	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածի 7-րդ մասում» բառերը փոխարինել «հոդվածում» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	ԱՍ-011/1)			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի (*Կ-479[7]-13.02.2020-ԱՍ-011/1)*	Առաջարկվում է նախագծում կատարել հետևյալ տեխնիկական փոփոխությունները. Նախագծի 1-ին հոդվածից հանել մասերը և այն շարադրել մեկ հոդվածի տեսքով, 2-րդ հոդվածում 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ:	Ընդունվել է: նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479[3] -13.02.2020-ԱՍ-011/0)	Առաջարկվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածների տրամաբանությունից ելնելով, Նախագծի 1-ին հոդվածով օրենսգրքում լրացվող 270[1] հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները. Սահմանել որ վճռի վերացման դեպքում դատարան կարող է դիմել այն հոգեբուժական կազմակերպությունը, որտեղ գտնվում է ոչ հոժարակամ բուժման ենթարկված քաղաքացին և դատարանը վճիռը կայացնելու է հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով օրենսգրքում լրացվող 270[1] հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն		«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝Նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը: Վերոգրյալից ելնելով առաջարկում եմ նախագծերի փաթեթի ուժի մեջ մտնելու ժանկետ սահմանել պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո:	Ընդունվել է: կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: